ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի 17-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.5-րդ կետի 12-րդ և 27-րդ ենթակետերի, ինչպես նաև Պալատի նախագահի 20.01.2020թ. թիվ 15-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 7-րդ, 8-րդ և 28-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք) հրավիրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***2026 թվականի*** **սեպտեմբերի** ***22-ին Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մյասնիկյան 6շ., 37 փարածք հասցեում*** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համակարգողի ընտրության համար անցկացնել Լոռու մարզի փաստաբանների ժողով (**այսուհետ՝ Ժողով**):

2. Սահմանել, որ՝

2.1. ***թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2026 թվականի սեպտեմբերի 3-ին (սույն որոշման հրապարակման օրը) և ավարտվում է 2026 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 18:00-ին.***

2.2. ***քարոզչությունը սկսվում է 2026 թվականի սեպտեմբերի 15-ին և ավարտվում է 2026 թվականի սեպտեմբերի 20-ին.***

2.3. ***2026 թվականի սեպտեմբերի 21-ը համարվում է լռության օր.***

2.4. ***Ժողովի քվեարկությունը սկսվում է 2026 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին, և ավարտվում է նույն օրը՝ ժամը 13:00-ին:***

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- իրազեկել Լոռու մարզի փաստաբաններին՝ ծանուցումը Պալատի ցուցակում գրանցված էլեկտրոնային փոստով ուղարկելու, Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեում) գտնվող համապատասխան ցուցատախտակի վրա փակցնելու, ինչպես նաև Պալատի կայքէջում հրապարակելու միջոցով:

03 սեպտեմբեր 2026թ.
թիվ 553-Լ

- սույն որոշման մասին իրազեկել մարզային խնդիրների համակարգման գծով Պալատի նախագահի տեղակալին.
- Համապատասխան մարզային հաշվիչ հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

4. Հաստատել Լոռու մարզի փաստաբանների համատեղ հավաքի ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

03 սեպտեմբերի 2026թ.
թիվ 553-Լ
ք. Երևան

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
03.09.2026թ. թիվ 553-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Լոռու մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2 03.09.2026թ.

Հարգելի՛ փաստաբան,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2026 թվականի սեպտեմբերի 22-ին Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մյասնիկյան 6շ., 37 փարածք հասցեում (ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Վանաձոր քաղաքի նստավայր) Լոռու մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ հրավիրվելու է Լոռու մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ Ժողով):

1. Քվեարկությունը սկսվում է **2026 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին, և ավարտվում է նույն օրը՝ ժամը 13:00-ին:**
2. Մարզային համակարգողի **թեկնածուների ինքնաառաջադրումը սկսվում է 2026 թվականի սեպտեմբերի 3-ին և ավարտվում է 2026 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ժամը 18:00-ին:**
3. Քարոզչությունը սկսվում է **2026 թվականի սեպտեմբերի 15-ին և ավարտվում է 2026 թվականի սեպտեմբերի 20-ին:**
4. Մարզի յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:
7. Համակարգողի թեկնածուի առաջադրումը կատարվում է հաշվիչ հանձնաժողովին ինքնաառաջադրման մասին դիմում ներկայացնելու կարգով:
8. Ինքնաառաջադրվելու իրավունք ունի յուրաքանչյուր՝ արտոնագիրը չկասեցրած փաստաբան, ով՝

ա) հաշվառված է և գործունեություն է իրականացնում (ունի փաստաբանական գրասենյակ կամ աշխատում է փաստաբանական գրասենյակում կամ որպես փաստաբան հիմնականում գործում է) մարզում,

բ) տիրապետում է համակարգչային հմտություններին (կարողանում է վարժ օգտվել առաջին անհրաժեշտության համակարգչային ծրագրերից, այդ թվում՝ MS Word ծրագրով կազմել տեքստ, ինչպես նաև օգտվել համացանցից):

9. Փաստաբանը կարող է որպես համակարգող ընտրվել միայն մեկ մարզում:
10. Մարզային համակարգողի թեկնածու չեն կարող ինքնաառաջադրվել

Պալատի նախագահը, Պալատի խորհրդի անդամները, ինչպես նաև նույն կարգով նախատեսված վստահված անձինք և հաշվիչ հանձնաժողովի անդամները:

11. Ինքնաառաջադրման մասին դիմումը պետք է պարունակի՝

- թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը.
- թեկնածուի բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն.
- թեկնածուի աշխատանքի կամ գործունեության վայրը և պաշտոնը (զբաղմունքը).
- համակարգչային գիտելիքներ ունենալու վերաբերյալ նշումը.
- թեկնածուի արտոնագրի համարը.
- թեկնածուի ստորագրությունը:

12. Թեկնածուների ինքնաառաջադրման համար սահմանված ժամկետի ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը մեկ օրվա ընթացքում ընդունում է որոշում թեկնածուին գրանցելու կամ գրանցումը մերժելու մասին: Թեկնածուի գրանցման պահից, վերջինս ձեռք է բերում քարոզարշավին և ընտրությանը մասնակցելու իրավունք:

13. Թեկնածուի գրանցումը մերժվում է, եթե թեկնածուն հաշվառված չէ կամ գործունեություն չի իրականացնում համապատասխան մարզում, կամ առկա է սույն կարգով նախատեսված թեկնածությունը բացառող այլ հանգամանք: Թեկնածուի գրանցումը մերժելու մասին հաշվիչ հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատճառաբանված:

14. Թեկնածուի գրանցումը մերժելու մասին հաշվիչ հանձնաժողովի որոշումը կարող է երկու օրվա ընթացքում բողոքարկվել Պալատի նախագահի առաջին տեղակալին:

15. Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը պետք է ներկայացվի մարզային հաշվիչ հանձնաժողովին ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ հասցեով կամ էլեկտրոնային նամակով՝ info@advocates.am հասցեով (առնվազն ստորագրված և սկանավորված տարբերակով):

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի աշխատակազմ